

պէս խրոմարմարի և թուշիկի հարցը. հաստատապէս կարելի է ասել որ ամեն մարդ մի քանի օտարի աւել կարգաց այն օրը. Գամբէտտայի ճառագրութիւնը բոլոր լրագրիւնները, մի քանի բացառութեամբ, տարբեր իրենց էջերում. այս յարթութեան պատճառով, սոցիալիստները, Ռոչֆորը և խեղճ Լուի-Միշլը իրենց համախոհներին հետ միասին քիմեր կարև են դրել և շատ տխուր են: Թէև նամակս երկարում է բաւականի, բայց զէպ եմ համարում մի քանի լրագրիւններ կարծիքները մէջ բերել. ահա թէ ինչ են ասում մի քանիսը իրենց օրգաններում. La Vérité նոր այրիացած կնոջ նման է լայն և ասում որ բանը վերջացած է արդէն, օգնել չէ կարելի, մենք չէինք կարծում որ փարիզեցիք այդ աստիճան միամիտ կը լինէին Գամբէտտայի լաւարկազարթութիւնը չը հատկանալու համար, բնագործներին տակի մասխարա Պօլ-Գը կասեմակը կարծում է մեծ բարեբարութիւն է արել Գամբէտտային ցուցակներով ընտրութիւնը բուժարկելով և ուղղել է նրան թագաւոր անել ահա ինչպէս:

«Մենք չենք պատկանում այն տեսակներին, ասում է պարոնը, որոնք ընդունում են սխալ և անուղիղ ճանապարհ և մենք կարծում ենք որ և-թէ մի դժբախտութիւն կարող էր հասնել Ֆրանսիային, այդ կը լինէր մի քողոց, բարի և աղին մարդու նախագահութիւնը, որին մենք միշտ յարգել ենք և որը կուզուի է Ժիւլ-Վրեյի Որպէս զի հասարակագետութիւնը մեռնի, որպէս զի աշխարհին շրտ կողմից բարձրացող քամին կարողանայ աւելել նրան, պէտք է որ նա ան-ձարձակիլի, պէտք է որ նա ազատ լինի արկածից արտաքուստ և ներքուստ, պէտք է որ նա ան-սանձ և անսահման կերպով գործէ բոլորը իր կամքի համեմատ, յանձնի իրան ամեն վատու-թեան և վերջապէս թաւաղարի խայտառակու-թեան մէջ. կայուն հասարակագետութիւնը մեզ սպառնում էր լքումն, մահ և երկիւղով վախ-ճան Բայց անցած ժամը և նա յանձնվելով հե-րարձակ, խնայողոր ինչպէս հիստերիկով հիւանդ լիտի աղբիկ, իր կողմից պաշտպաններին, որոնք ահա ասոր տարի շարունակ փաղաքում են—caresser—առանց նրան դադրեցնելու: Այս ամո-թալը կապի վկայ կը լինեն այսուհետ արեղակը և լայն ցերեկը իր գործակիցը. մենք սպասում ենք դրանից պիղծ արտագրութիւն, մեզ օգտա-բեր է զգուսնք և կը լինենք դրա շարագուշակները. Ահա թէ ինչու համար քուէարկեցինք ցուցակնե-րով ընտրութիւնը:»

Յարգելի ընթերցողը չը պիտի օխորժէ ան-կասկած, կարողա՞ Պօլ-Գը-Կասեմակի պէս փոճու-լեզու գործադրողներ կարծիքը, ինչպէս Ռոչֆորի-նը, թէև պարոնը չէ պատկանում յետադէմնե-րին. ինչ կը վերաբերի հասարակագետական օր-գաններին, մեծ համակրանքով են խօսում այս մասին և շնորհակարար են յարթութիւնը Գամ-բէտտային, մի իտաքով այս վճիռը նման էր կատարի հարսանիքին և միջերի մահին: Սի քանի այրված օրերը կարծում են որ այս վճիռը կը մերժվի Սենատում, իսկ մենք ընդհակառակն ևսք կարծում, որովհետև նոյն իսկ այնտեղ շատ կու-սակիցներ ունի այս վճիռը:

Այս նամակով տեղեկութիւն եմ տալիս մի քանի մասին, որը, իմ կարծիքով, մեծ ուրախու-թեան պէտք է պատճառէ բոլոր հայրենասէր և ճշմարիտ ազգասէր մարդոց. թող հայ խմբակի-ւնքը և հասարակութիւնը ուշադրութիւն դարձնեն այս հասցածանքի վրա, դատեն և քննեն ուշ-ուշով և հասկանան վերջապէս թէ ինչքան օր-տաբեր կը լինի իրենց կի՞ յաշնոցներն զԼուի բերել այս բանը:

Ահա թէ ինչու մե է կայանում գործը. երկի բախտի բերմունքով պատահութիւն ունեցայ ներկայ գտնվել արդէն հայկերին լաւ ծանօթ պա-րոն Վիլլորիէի դատախոսութեանը, ուր գտնվում էին մի քանի հայ երեսասարդներ, որոց մէջ գտնվում էր նաև հայր խորէն-Ստեփաննէ: Դատախոսութիւնից յետոյ Տ. սուբբը զիմից դարձնի Վիլլորիէին հետեւալ խօսքերով.—գուք երկար ժամանակ է որ հայերի վրա գրելուց դադարել էք, այլ ևս ոչինչ չէք ասում այս թշուառ ազգի մասին. Ձեր խօսքը մեզ համար թանկ արժէ և հաւատարմած եմ որ ձեր ձայնը լսելի կը լինի լուսաւոր Լեւոզային:

Պարոն Վիլլորիէն դժգոհութիւն յայտնեց իրա-ւայի կերպով ասելով, որ ինքը արդէն գրաւոր կերպով զիմել է և Պօլի հայոց ազգային ժո-ղովին և խնդրել է, որ օգնեն իրեն որ և է կեր-

պով փարիզում հիմնել մի օրգան—ի հարկէ Քը-րանսերէն լեզուով—որը կը զբաղվի միայն հայոց ինքրով և դատի պաշտպանելով, բայց ազգային ժողովի կողմից ոչինչ քաջալերութիւն չէ ստա-ցել: «Մինչև անգամ, ասում է պարոնը, ևս պատրաստ էի ամենայն սիրով կատարել առա-ջարկութիւնս, եթէ ազգային ժողովը բարեհաճէր գոնեայ 200 բաժանորդ մատակարարել ինձ, իսկ թէ կուզէք, սուք ինձ 200 բաժանորդ, խօսենք և դատենք այս մասին և հաւատարմած եղէք որ շուտով կը յաջողի մեզ այս բանի իրա-գործելը:» Իմ կարծիքով մեծ ամօթ կը լինի մեզ համար թէ չուզենանք օգտվել այս հանգաման-քից քանի որ մարդը ինքն է առաջարկում և ինչպէս իր խօսքերից կարելի է հասկանալ, մի-չև անգամ այստեղի նշանաւոր արեղակաւ ան-ձինք կաշխատակցեն այս գործում:

Գարձեալ կրկնում եմ, թող ուշադիր լինեն այս բանին հայ առաջաւոր և ձեռնհաս մարդի-կը, թող հայ խմբակիւնքը համաբարոզ—Pro-pagande—կարգան հասարակութեանը այս իրա-գործելու և թող թիւրքիայի հայ ժողովուրդը համոզված լինի որ կը քաղէ անպատճառ իր ցանկացած պտուղները:

Լանդիշ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԳԻԱՅԻՑ

Վ. Պօլիս, 16/28 մայիսի

«Մշակն» մի հեռագիր էր տպած Վ. Պօլսին ծանուցանելով իմ անուանումս իր ատենագրա-տնօրէն ժողովոյ Միացեալ Ընկերութեանց: Սո-ցիա հետեւալ նրա տնի մէջ մի պայման առաջար-կեցի, որոյ ժողովին կողմանէ յետաձգելին հար-կադրեց զիս չընդունել առ այժմ այդ պաշտօնն: Ներկայեալ կողմով եմ ձեռն առաջարկու-թեանս պատճէնն «Մատիսն» կտրված, որու մէջ իմ պրօգրամս յայտնած եմ. զի սա է եղել ոչ միայն միշտ իմ համոզումս, այլ և այս տեղի հասարակութեան ուշիմ մասին միտումն:

Ազգային ընկերութեանց մի դրական ուղղու-թիւն տալն հասարակային կարծեաց մի հասանքն է այսօր, որու դէմ մաքառելն անհնարին է. և այս բարոգութիւնն որ կաննք մի քանիքս ու-րիշ արժանիք չունի, այլ այն որ կը հասկանալք ուրիշներէ յառաջ այդ հասանքին ուղիղ բն-թացքն և փութով կը հետեւիք նորս:

Իմ այս առաջարկութիւնն արտասպելով հրա-ժարմանս բուն պատճառն յայտնած կը լինիք, և այսպիսով առաջն կանուսք այն մեկնութեանց որ կարէ սա տեղի տալ, մեկնութիւնք որք գուցէ խիստ նպատաստը չը լինին Միացեալ Ընկերութեանց այժմեան կացութեանն մասին: Սա ինչ ուղղութիւն և ունենայ պէտք է որ ապրի սակայն, որպէս զի վաղ կամ անաղան յաջո-ղված այնպիսի մի կերպով գործել տալ նո-րա, որ ազգն իրականապէս օգտի եղած գոհ-ղութիւններէն:

Գօկտօր Տ. Փէշտիմալճեան

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԱԿԱՍՏԱՆԻՑ

Գավրէժ, 5 մայիսի

Անցեալ ամի 15-ին մեր առաջնորդ Գրիգոր սրբազանի կարգադրութեամբ Արամիան դպրոցի աշակերտները իրանց ուսուցիչներով ներկայա-ցան Արարատականի նոր նահանգապետ Լմբր-Նիգամին, որը այդ միջոցին սրբաւական պար-տիզումն էր և հեռագրական գծերով խօսում էր Նորին Վեհափառութեան շահի հետ: Երբ որ ա-շակերտները հասակի կարգով շարվեցան լճակի կողմ, նորին վեհափառութիւնը իր սենեակի պա-տուհանից դուրս նայելով, մի բազրի հայեց-վածք ձգեց դէպի աշակերտները և հայազգի գըն-դապետ Ջատուր խանի միջոցաւ նրանց առող-ջութիւնը հարցնելուց յետ, ուսուցիչներին հը-րաւիրեց իր սենեակը, որտեղ նա առանձին ա-ռանձին ծանօթացաւ նրանց հետ և հարցրեց, թէ նրանք ինչ առարկաներ են սովորեցնում, պա-տուիրելով որ աւելի ուշք դարձնեն ուսման վրա: Կրանից յետ Լմբրը դարձաւ դէպի կրօնուսուց Տէր-Յովնէֆ, ա. քանաւային, որին նստադրել էր իր առաջը, այսպիսի խօսքերով. «Կուք ա-ռանձին ուշադրութիւն դարձրէք զգրոցի և ա-շակերտաց վրա, աշխատեցէք արժանաւոր կըր-թութիւն տալ նրանց, ևս միջոց չեմ գտնում, եթէ ոչ անձամբ պէտք է գայի զպրօցը և աշա-

կերտներին տեսնելու»: Այս խօսքերից յետ Լմբ-րը հրամայեց գնեմալ կուլի խանին վճարել ու-սուցիչներին 30 թուանս պարգև, որ նոյն րո-պէին ստացվեցաւ: Գպրոցի հոգաբարձուներէց ներկայ էին Ասրի-բէկ Միքայէլեանց և պ. Մար-գար Նազարեղեանց:

Նոր նահանգապետ Լմբր-Նիգամը, որ առաջ ասվում էր Լա-էդ-Գօլլէ, մի զուարթ և զեղեց-կաղէմ անձնուորութիւն է, մօտ 60 ամեայ, մի հմուտ և գործունայ մարդ, հուշակաւոր Վէջա-րեան ցեղից—այժմեան տիրող վեհապետի ցեղից: Այս ցեղը Պարսկաստանի բոլոր իշխանական սոհ-մերից ամենահեղին է, և դրա համար ասվում է Բաշ-ղաջար, այսինքն աղին կամ զլիսաւոր զէջար: Նորին վեհափառութիւն —Լմբրը՝ շահի մոե-րիմն է և խօսրդակաւոր: Բացի դրանցից, նա լինելով պալատական գրանիկներէց ամենազը-խաւորը, իր հաւատարիմ ծառայութիւններով ընդ միշտ սիրելի է եղած շահին, նրա դահակա-լութիւնից մինչև այսօր, որ երեսուն տարուց աւելի է:

Այս օրերս քրդական հարցը կրկին յարուցվե-ցաւ, այլ ընդ այլոց խօսքեր և զրոյցներ լըս-վում են բերանացի և զրաւոր: Շէյխը ինչպէս կրեւում է, դարձեալ պատերազմական պատրաս-տութիւններէ մէջ է. թիւրքաց կռուավորու-թիւնը կամ չը կարողացաւ նրան բռնել, կամ կամք չունի նրան բռնելու, որ աւելի հաւանա-կան է: Լսում ենք որ զեռ նոր թիւրքաց կա-ռավարութիւնը 27 հազար զօրք պէտք է ճանա-պարհ հանէ դէպի Վան, որտեք այդ կողմերը հաս-նելով պէտք է քրդերի պատամբութիւնները զապնէ: Շահի հօրեղբայր Սուլթան Մուրադ Միր-զան, որ ասվում է Էստամըլ Սէլթէն, Մէքքէի ուխտագնացութեան պատճառով գտնվում էր Վ. Պօլիս, մօտերս վերադառնալով թաւրիցի անցաւ Թէհրան: Նրա հետ գնում էր սուլթանի պալատական ետեղներէց Սուլթան փաշան, որ-րին սուլթանը ուղեկից էր տուել արքայազուն մեծ իշխանին Վ. Պօլիսից մինչև Թէհրան: Սա-կայն ասողներ կան, որ այդ փաշան գնում է մօտաւոր իշխանութեամբ, իրրի արտակարգ դեսպան (envoyé extraordinaire) պարսից և թիւր-քաց սահմաններում եղած գծաւորութիւններին վերջ տալու համար: Տեսնենք ինչ է լինում պարսից կողմից: Անցեալ տարուանից՝ արդէն պարսիկ-ները մի հակող բանակ թողած էին սահմանում՝ Քրդասանի հանդէպ, այս մօտ օրերս մի ստուար զօրաբաժին ևս Թէհրանից եկաւ, որ կրթեալ զօրքերից է բազկացած մօտ 10 հազար ձիաւոր, հետեակ և թնդանթաձիգ, որոնք զինված են նոր հրացաններով և հետզհետէ, որպէս լսում ենք, պէտք է գան մի այդպիսի էլ և դնան խոյի Սալմաստի և Ումիու կողմերը: Մի քանի օրից յետոյ թաւրիցի դաշտերից մէկում կը լինի մեծ զօրահանդէս և զինուարժութիւն Լմբրի և մեծա-մեծ պաշտօնակալների ներկայութեամբ, թնդա-նթները պէտք է գոտան և հրացանները որո-տան մի քանի ժամ երկու կողման այս բոլոր զինուորական պատրաստութիւնները և զգուշու-թիւնները նկատուուց յետոյ, կարելի է ենթադ-րել որքեօք, որ այս բոլորը լինում են միայն ցոյցի համար: Կարելի է ենթադրել արդեօք, որ այս բոլորը կը ծագեցնեն երկու տերութիւնների մէջ մի արեւանակ պատերազմ: Հարկաւ սրանք զի-ւանագրտական սքօրեալ գործընթացներ են, մեզ հա-րամարտութեան անհասկանալի, որ անշուշտ մօ-տիկ ապագան պէտք է լուծէ:

Մեր քաղաքի հայ հասարակութեան գործերը կարծես կանգնել են, էլ զէպի ստաջ չեն ըն-թանում, նախկին հոգաբարձուները հրաժարված են: Նրանց տեղ երեք հօգի նորից բնորոշ-ցան, սրանք էլ անդառնի կերպով գործերից քաշվածի պէս եղան: Այժմ միակ գործող անձն առաջնորդն է մնացել: Նա էլ գուցէ չուսով կըրթայ Այլմասա, անցեալ տարուանից իր ձեռնարկած մի քանի զիւղական զպրօցները կարգի դնելու համար: Աւարտյանն օրիորդաց զպրօցի վարձուհին քաղաքիցս հեռացած է, առ-այժմ այդ զպրօցում գասերի շարունակու-թիւնը մնացել է Տէր-Յովնէֆ բարեկրօն քանա-նայի վրա: Այժմ դեմաւորութիւն կայ թաւրի-զում մի առանձին արական մասնաւոր զպրօց—մի պանիօն բացանել: Այդ զպրօցը մասնաւոր է, մի քանի վաճառականներ իրանց հաշուով բե-րել են տալիս մի ուսուցիչ՝ իրանց զաւակաց կրթութեան համար:

Մեզանում մարտ և ապրիլ ամիսները ամբող-ջապէս անձրեային անցան, մենք այժմ ունենք մի խիստ հազուադէպ գործուն: Առատութեան ձայնը լսվում է ամեն բերանից, ժողովուրդն այն աստիճանի հրացած է ներկայ տարուայ բուսեղէն թագաւորութեան վրա, որ այժմեանից սկսել է կտրածել, թէ անպատճառ այս տարի հունձքին մի վնաս կը հասնէ, կամ մերեւ կը գալ, կամ քիւրդերը կը թալանեն, կը կողոպ-տեն և կամ մի սարափելի կարկուտ բոլորը կը փչանէ: Եթէ դրանցից ոչ մէկն էլ չը պատահի, ասում է ուսմիկ ժողովուրդը, մի անակիկալ զէպք բոլորը կը լափէ, որովհետեւ մի այսպիսի սուստ տարի հաջիկ թէ կը պատահի: Մեր ժո-ղովուրդան այսպիսի կասկածանքները ինձ յիշել են տալիս այստեղ մի վաղեմի անցք, որ լսել եմ մի ձերուսու բերանից: «Կարազաղ զաւա-ռում մի տարի լինում է մի խիստ զեղեցիկ գա-րուն, նրանից յետ գալիս է ամառը, կալերը զեղում են և հասունանում և հասնում են մար-դահասակ բարձրութեան: Մի հայ գիւղացի պա-տանմար անցնելով մի կալի մօտից, տեսնում է ցորենի հասկերի հերանց դնալը, ինչպէս զա պատահում է քամու ժամանակ, սկսում է կաս-կածել թէ չը լինի մի արտերը փախչում են մեր ձեռքից, որպէս զի մենք նրանց առատու-թիւնը չը վայելենք: Այս մտածուցքով զիւ-ղականը վազում է իրանց գիւղը և չափ զցում այսպիսի աղաղակներով: Գիւղացիներ, քաջեր, ինչ էք չինում, օրնութեան հասէք, կորած ենք, մեր արտերը փախչում են: Ինչպէս պատում են այդ գիւղացիք առհասարակ խնդուկներ են լի-նում, որտեք առանց իրկար մտածելու իսկոյն խորհուրդ են անում իրանց մէջ և որոշում, որ ստաջ գնան իրանց գիւղի մէլիքի արտն ազա-տեն, ենթադրելով որ նա յաճախ հիւրեր է ու-նենում, նրան է շատ կարեւոր ցորեն ունենալը, իրանց ինչպէս որ լինի, մի կերպով կապրեն, այս ասելուց յետոյ, մանում են իրանց աները, և որքան որ ձեռք է դնելում կարպետ փալատ, իշի համաւ և այդպիսի բաներ, ասնելով ծած-կում են մէլիքի ամբողջ արտը, որպէս զի նրա տարեկան պաշարը ապահովին: Բայց մի քանի ժամից յետ երբ դադարում է հողմը, նրանք տեսնում են որ բոլոր կալերը կանգնած են ան-վտանգ, իսկ մէլիքին իրանք իրանց ձեռքով կո-խտուել են և փչացրել մի չար բախտով: Այս անցքը պատահել է Վարազաղի մի հայ գիւ-ղում:

Արմենակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Սիասովալում մի բողոքացի սուլթան սպանել է մի ուսու օֆիցերին, որ պաշտպանում էր իշ-խանի պահանջած փոխխոսութիւնը:

—Վիլնայից հեռագրում են որ Բ. Գուրը ամբացում է Վ. օլօ և Արտա տեղերը:

—Լօնդօնից հեռագրում են որ անգլական պաշտօնական թերթի մէջ յայտնված է, թէ Ռիպրոս կզգին չէգոք կը յայտնվի, եթէ թշա-մութիւններ ծագեն Անգլիայի և այն պետու-թիւնների մէջ, որոնց հետ Անգլիան այժմ բա-րեկամական յարաբերութիւններ ունի:

—Մարսելի գատարանը դատապարտել է Պատու Միլիկ յեղափոխական կնոջը մի ամսվայ բանտարկութեան հակաուստական ցոյցերի հա-մար, իսկ նրա ընկերներին մի քանի ամսվայ բանտարկութեան և մի քանի հարիւր ֆրանկ տուգանքի:

—«Republique Francaise» լրագիրը, որ ինչպէս յայտնի է Գամբէտտայի օրգանն է, սպառնում է ֆրանսիական սենատին, որ եթէ նա ընդդի-մանայ ցուցակներով ընտրողական ձևի նախա-գծի ընդունելուն, այդ ընդդիմադրութեան հա-մար նա կարող է վճարել իր գոյութեան գնով:

—Բէլգրադից հեռագրում են որ իշխան Մի-լան չուսով ուղարկում է Բերլին:

—Վ. Պօլիցի հեռագրում են. Բրիտանական նոր դեսպան լորդ Գլօֆերինի Վ. Պօլիս հասնելուն պէս բանակցութիւններ կը սկսվեն Հայաստանի մէջ վերանորոգութիւններ մտցնելու մասին Բեր-լինի դաշնագրին համեմատ: